REPUBLIC OF ARMENIA
KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО МАЯКОВСКИЙ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետություն , Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի , 1փ. 8/1 շ. , Հեռ060 28 5013 , 060 28 50 12 ., E-mail mayakovski-1@mail.ru

N 147
14 հոկտեմբերի 2016թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Գուլոյան

՛Տեղական ինքնակառավարման մասին՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջի համաձայն , Ձեզ է ներկայացվում Մայակովսկի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 12-ի հերթական նիստի որոշումները :

Առդիր. 1 ֆայլ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

.Կատ. աշխ. քարտուղար
Վ. Փայտյան
094 24 11 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<12>> հոկտեմբերի 2016թվական N 51 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով ,համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

Հաստատել Մայակովսկի համայնքի ավագանու 2016 թվականի հոկտեմբերի 12-ի հերթական 13-րդ նիստի **օ ր ա կ ա ր գ ը.**

1. Համայնքի ղեկավարի հաղորդումը 2016 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին
2. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին
3. Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

| Կողմ (6) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|
| ԱԶԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ | | |
| ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ | | |
| ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ | | |
| ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ | | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ | | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2016թ. հոկտեմբերի 12
Գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<12>> հոկտեմբերի 2016 թվական N 52-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածով , համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2016 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն N N 1,2,3,4 հավելվածների :

**Կողմ (6)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2016 թ հոկտեմբերի 12
Գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12» հոկտեմբերի 2016 թվականի N 53-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 27-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 10-ի թիվ 26 դրական եզրակացությունը, համայնքի ավագանին *ո ր ո շ ո ւ մ է.*

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում պետական սեփականություն հանդիսացող հատուկ նշանակության հողերից 8.4 հա հողամաս / կադաստրային ծածկագիր 07-043 -147-001 / փոխադրել արդյունաբերության , ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ ընդերքօգտագործման համար տրամադրված հողեր գործառնական նշանակության :

3.Համայնքի ղեկավարին՝

1)սույն որոշման առաջին կետում նշված հողամասը երեք տարվա ընթացքում նպատակային նշանակությամբ չօգտագործվելու դեպքում՝ սահմանված կարգով ներկայացնել սույն որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման նախագիծ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

| Կողմ (6) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2016թ.հոկտեմբերի 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք,
գ. Մայակովսկի. Հեռ 060 285013 E-mail mayakovski-1@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12» հոկտեմբերի 2016 թվականի N 54-Ա

## ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և 32-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ՝ համաձայն հավելվածի:
2. Մայակովսկի համայնքի ղեկավարին՝ Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:
3. Ուժը կորցրած ճանաչել Մայակովսկի համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 6-ի «Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 39-Ա որոշումը :
4. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերն ուժի մեջ են մտնում Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

**Կողմ (6)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱԶԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ

ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ

ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

Գ.Մայակովսկի
2016թ.հոկտեմբերի 12

**Հիմնավորում**

<< Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 54-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Մայակովսկի համայնքի ավագանու որոշման նախագծի

Նախագծի ընդունմամբ կկարգավորվի Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը, իսկ հաստիքներ այսուհետ կավելացվեն ծայրահեղ անհրաժեշտությունից ելնելով:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՀԱՍՏԻՔ

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ- ծածկագիր 3.3-3

**ՏԵՂԵԿԱՆՔ**

<< Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 54-Ա որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Մայակովսկի համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման վերաբերյալ

<< Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 54-Ա որոշման նախագծի ընդունմամբ Մայակովսկի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացում չի նախատեսվում:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ
Մայակովսկի համայնքի ավագանու
2016թվականի հոկտեմբերի 12-ի N 54-Ա որոշման

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը – 12
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մայակովսկի համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 409000 | - | - | 409000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 185000 | - | - | 185000 |
| 3 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 190000 | - | 19000 | 209000 |
| 4 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 170000 | - | 17000 | 187000 |
| 5 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-2 | 1 | 170000 | - | - | 170000 |
| 6 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 135000 | - | 13500 | 148500 |
| 7 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-1 | 1 | 90000 | - | 9000 | 99000 |
| 8 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.3-4 | 1 | 90000 | - | 9000 | 99000 |
| | | Տեխնիկական սպասարկման անձնակազմ | | | | | | | |
| 9 | | Գյուղապետարանի պահակ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 140000 | - | - | 140000 |
| 10 | | Գյուղապետարանի հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 73000 | - | - | 73000 |
| 11 | | Գերեզմանատան աշխատող | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 73000 | - | - | 73000 |
| 12 | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 250000 | - | - | 250000 |
| | Ընդամենը | | | | 12 | | | | 2 042 500 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ.ՓԱՅՏՅԱՆ